ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/55

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Իմպեքս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Իմպեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սահակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնանշման հարցում, շինարարական ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2992-2021 գրությամբ «Իմպեքս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.02.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/923-2021 գրության հիման վրա, 02.03.2021թ.-ին «Իմպեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 02.03.2021թ.-ին:

02.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/55 համարի ծածկագիրը:

10.03.2021թ.-ին, 19.03.2021թ.-ին և 26.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 19.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.03.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.02.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/923-2021 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Իմպեքս» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): 22.01.2021թ.-ին գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Իմպեքս» ՍՊ ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով: 03.02.2021թ.-ին Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը: Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրել պայմանագիրը և

պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ապահովումը, ուստի վերջինս զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից և գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվել է 7-րդ չափաբաժնի մասով՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը։»։

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Իմպեքս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Իմպեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Իմպեքս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2992-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով 10.03.2021թ.-ին և 19.03.2021թ.-ին հրավիրված նիստերին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Իմպեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/55 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շինարարական ապրանքների ձեռքբերման նպատակով 28.12.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ

նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 7-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Իմպեքս» ՍՊԸ-ն:

ii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.01.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Իմպեքս» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

iii. 25.01.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

iv. Պատվիրատուն 03.02.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է սույն ծանուցումն ստանալուց հետո ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված ժամկետում ՀՀ ՊՆ ԳԿ վարչություն կից գրությամբ ներկայացնել կնքված պայմանագրի 2 օրինակ, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների տուժանքները:

v. Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 1224, կոդը՝ RR293631104AM/ համաձայն՝ «Իմպեքս» ՍՊԸ-ն 16.02.2021թ.-ին պատվիրված նամակով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ Բագրևանդի 5, ՀՀ ՊՆ) ուղարկել է առաքանի:

vi. www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 1224, կոդը՝ RR293631104AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 19.02.2020թ.-ին, ժամը 03:12-ին:

vii. Հանձնաժողովի 19.02.2021թ.-ի ժամը 11:15-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը, որոշել է 7-րդ չափաբաժնի մասով մերժել մասնակցի հայտը և վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

viii. ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.02.2021թ.-ին Մասնակցին ուղղված թիվ ՆՏԱ/686 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Իմպեքս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ուղարկվել է 03.02.2021թ.-ին: Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10

աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 17.02.2021թ.-ը ներառյալ), չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ապահովումը, ուստի «Իմպեքս» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի, ինչով պայմանավորված վերադարձվել է վերջինիս կողմից ներկայացված «ԳՀԱՊՁԲ-21-20/2-3» ծածկագրով գնման պայմանագիրը և պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների տուժանքները, որոնք Պատվիրատուն ստացել է 23.02.2021թ.-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2992-2021 գրությամբ «Իմպեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ նեթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինարարական ապրանքների ձեռքբերման նպատակով 28.12.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության հիման վրա «Իմպեքս» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված Պատվիրատուն 03.02.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է սույն ծանուցումն ստանալուց հետո ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված ժամկետում ՀՀ ՊՆ ԳԿ վարչություն կից գրությամբ ներկայացնել կնքված պայմանագրի 2 օրինակ, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների տուժանքները:

Հանձնաժողովի 19.02.2021թ.-ի ժամը 11:15-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ

օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը, որոշել է 7-րդ չափաբաժնի մասով մերժել մասնակցի հայտը և վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.02.2021թ.-ին Մասնակցին ուղղված թիվ ՆՏԱ/686 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Իմպեքս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 03.02.2021թ.-ին: Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 17.02.2021թ. ներառյալ), չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ապահովումը, ուստի «Իմպեքս» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի, ինչով պայմանավորված վերադարձվել է վերջինիս կողմից ներկայացված «ԳՀԱՊՁԲ-21-20/2-3» ծածկագրով գնման պայմանագիրը և պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների տուժանքները, որոնք Պատվիրատուն ստացել է 23.02.2021թ.-ին:

Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 1224, կոդը՝ RR293631104AM/ համաձայն՝ «Իմպեքս» ՍՊԸ-ն 16.02.2021թ.-ին պատվիրված նամակով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ Բագրևանդի 5, ՀՀ ՊՆ) ուղարկել է առաքանի: www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 1224, կոդը՝ RR293631104AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 19.02.2020թ.-ին, ժամը 03:12-ին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ «Իմպեքս» ՍՊԸ-ն, հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 03.02.2021թ.-ին, էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 16.02.2021թ.-ին, կապի կազմակերպությանն է հանձնել պահանջված փաստաթղթերը, որը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է ժամկետում հանձնված:

Ընդ որում, հարկ է նկատել, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը Կարգի 45-րդ կետի հիմքով ՀՀ ֆինանսների նախարարությանն է դիմել 02.03.2021թ.-ի թիվ 26/26-

1/2992-2021 գրությամբ, այն դեպքում, երբ 25.02.2021թ.-ին ներկայացված թիվ ՆՏԱ/686 գրությամբ Պատվիրատուն հավաստել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը փոստի միջոցով ստացել է «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը և պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների տուժանքները:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն կարող էր Կարգի 45-րդ կետով սահմանված ու իր վրա դրված պարտավորությունը կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հաշվառմամբ, որի արդյունքում ստանալով «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից ուղարկված իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի բնօրինակը կհամարվեր ժամկետում ներկայացված, ուստի և պայմանագիրը կնքված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Իմպեքս» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 16.02.2021թ.-ին, Պատվիրատուին ներկայացրել է պայմանագիրը, որպիսի պայմաններում Մասնակիցը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2992-2021 գրությամբ «Իմպեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/55 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**